

Մշակութային եւ Հասարակական
Երկշաբաթաթերթ

Ջոյս

1800 թուման

Հայաստանում՝ 320 դրամ

ՄԻՍ ՈՒՏԵՆԼ, ԹԷ՞ ԶՈՒՏԵԼ





Երկշաբաթաթերթ

6-րդ տարի, թիւ 136, 5 Դեկտեմբեր 2012,
1800 թուման
Հայաստանում՝ 320 դրամ



ԱՅՍ ԶԱՄԱՐՈՒՄ

- 2 ԹՅԹ Պատգամաւորական ժողովի ընտրութիւնների արդիւնքները
- 4 Ազատ Մաթեանի մեծարանքի երեկոյ
- 6 Լեւոն Ահարոնեանի հարցումը Կարսի պայմանագրի ներկայ վիճակի մասին
- 14 Դրանկոց բաղթար Աշուղ Ճատուրոզլի
- 15 Տունդարձի կարօտախտ Յովսէփ Նազլումեան
- 16 Das kapital (հատուած վթայից) Վիգէն Բերբերեան
- 18 Զարիկանները՝ աւերածութեան շարժիչներ
- 20 Ողջ աշխարհը ֆուտբոլ է խաղում
- 22 Գուստաւ Կորբէյի մի կտաւի պատմութիւնը Երևանդ Քոչար
- 24 Մարզանք Արման Տէր Ստեփանեան

ԱՄԵՆ ԲԱՆ ԲՈՒՍԱԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

- 8 Միս ուտել թէ՛ չուտել
- 9 Մսակերութեան պիրամիդը
- 10 «Կենդանիների ազատագրութիւնը» գրքի մասին
- 12 Նշանաւոր բուսակերներ
- 13 Բուսակերների տեսակներ

Պարսկերէն բաժին

- | | | |
|--|--|---|
| 2 Այս համարի հայերէն էջերում | 6 Զայերէն լեզվի դասաւանդումը Թուրքիայում Ազիզ Օզըզ | 10 Երեւանի Լենինի արձանի պատմութիւնից Ժ. Մնացականեան |
| 4 Արդեօք Պատգամաւորական ժողովը խորհրդարանն է Ռոբերթ Սաֆարեան | 8 Իստ Ինդիի հայ համայնքը | 12 Ուրախ ամառ Աբաղանի Նաւթընկերութեան ակումբում Ալվարդ Թորոսեան |

Յոյս

Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ

Արտօնատեր՝

Լեւոն Ահարոնեան

Խմբագիր՝

Ռոբերթ Սաֆարեան

Խմբագրական կազմ՝

Լիա Խաչիկեան,
Գարուն Սարգսեան,
Արմինէ Մելիք-Իսրայէլեան

Գեղարւեստական ձեւաւորում՝

Լիա Խաչիկեան

Գովազդ

Անի Ղելիչեան

Կայք

Քաջիկ Սաֆարեան

Մարզական

Արման Տէր Ստեփանեան

Բաժանորդագրութիւն

Քաթրին Եաղուբի

Զասցէ՝

Թեհրան, Ջամ պողոտայ,
համար 18, բնակարան 1
88300472 88825521

hooyes@inbox.com

www.hooyes.com



Կենտրոն

Ս. Սարգիս եկեղեցու ընտրատարածք

1-Գէորգ Վարդան	1081 քւէ
2-Վարդան Վարդանեան	1074 քւէ
3-Ժանետ Թունեանց	654 քւէ
4-Վարուժան Բաբունի	628 քւէ
5-Նորայր Արամեան	624 քւէ
6-Յարթուն Եղնազար	612 քւէ
7-Սեդրակ Գոջամանեան	601 քւէ
8-Արբի Սարգսեան	597 քւէ
9-Ալֆրէդ Դաուուրի	579 քւէ
10-Հենրի Ջուակիմ	574 քւէ
11-Լիլիա Նորաւեան	568 քւէ
12-Յակոբ Յակոբեան	563 քւէ
13-Ռազմիկ Խուրաբախչեան	531 քւէ

Չէյթուն

Ս. Գ. Լուսաւորիչ եկեղեցու ընտրատարածք

1-Էլիպս Մասեհեան	1013 քւէ
2-Ալբերտ Քոչարեան	997 քւէ
3-Սիլւանա Աւսապեան	994 քւէ
4-Աշոտ Սինանի	951 քւէ
5-Շաքէ Աւետեան	941 քւէ
6-Վահէ Խաչատրեան	920 քւէ
7-Վալոդ Հախինեան	918 քւէ
8-Հենրիկ Կարապետեան	892 քւէ
9-Արա Շահվերդեան	834 քւէ

ԹՅԹ ՊԱՏԳԱՄԱԻՌՈՐԱԿՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Այսու յայտարարում ենք, որ ուրբաթ Նոյեմբերի 16-ին տեղի ունեցան Թեհրանի հայոց թեմի 15-րդ Պատգամաւորական ժողովի ընտրութիւնները: Ընտրութիւնների արդիւնքները պարզ էին շաբաթ, Նոյեմբերի 17-ի վաղ առաւօտից, բայց եւ ընտրութիւններին առնչուող բողոքներին ընթացք տալով՝ չորեքշաբթի, նոյեմբերի 21-ին վերջնականացաւ ընտրութիւնների ամբողջական արդիւնքը, որը հրապարակոււմ ենք ստորեւ:

Առ ի տեղեկութիւն՝ վերահաշարկման ենթակայ եւ դարձեալ միայն մէկ ընտրատարածքին պատկանող մէկ ընտրատեղամաս, որի մասին լուսաբանական տեղեկութիւններ կը փոխանցուեն յանձնախմբի յաջորդ հաղորդագրութեամբ:

Յիշեալ ընտրատեղամասի վերահաշարկը ոչ մի ազդեցութիւն չի ունեցել նախնական հաշարկման վրայ: Ստորեւ համայնքի սեփականութիւնն ենք դարձնում ընտրութիւնների պաշտօնական եւ վերազնական արդիւնքները:

Սասուն

Ա. Թարգմանչաց եկեղեցու ընտրատարածք

1-Արմէն Հայրապետեան	1138 քւէ
2-Հրաչ Իսախանեան	964 քւէ
3-ԺողէՖ Մեհրաբեան	953 քւէ
4-Վահէ Բաբայեան	920 քւէ
5-Վահիկ Ռաթուս	918 քւէ
6-Խաչիկ Քեշիշ	892 քւէ
7-Ալարդ Այդինեան	878 քւէ
8-Ռուբինա Մարկոսեան	850 քւէ
9-Հրաչ Մարկոսեան	814 քւէ
10-Գուրգէն Զ.Յարթուն	775 քւէ
11-Արին Միրզայեան	766 քւէ
12-Էդիկ Մեհրաբի	762 քւէ
13-Հենրիկ Աղաջանի	759 քւէ

Ս. Աստուածածին

Ա. Աստուածածին եկեղեցու ընտրատարածք

1-Սեդիկ Թարվերդեան	127 քվե
2-Կարինե Բալըքճեան	121 քվե
3-Մարինա Թումանեան	120 քվե

Սարգարապատ

Ա. Վարդանանց եկեղեցու ընտրատարածք

1-Ժոռէս Գրիգորեան	139 քվե
2-Էդարդ Աբրահամեան	137 քվե
3-Գուրգէն Քարամեան	134 քվե

Սարի

Ալբերտ Մանասեան	58 քվե
-----------------	--------

Գորգան

Սառա Մալխասեան	60 քվե
----------------	--------

Ռաշտ/Ղազլին

Ժակլին Ղահրամանեան	49 քվե
--------------------	--------

Անգալի

Կարէն Տէր-Յովսէփեան	22 քվե
---------------------	--------

Արաք

Արման Մեջլումեան	48 քվե
------------------	--------



ԲՈՂՈՔ

«ԱՐԱՔԱՆԻԻԷ» 15-ՐԴ ՊԺ-Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶԱՐՑԱԿԱՆԻ ՏԱԿ

Շահած քվեների համեմատությունը ընդհանուրի մէջ կազմել է 44 տոկոս 56 տոկոսի դիմաց, որը խօսում է այն պարզ իրականութեան մասին, որ ժողովրդական կողմը շատ ավելի հզօր է, քան այն ինչ փորձում են ցոյց տալ դաշնակցականները:

Նոյեմբերի 16-ին կայացած, Թեհրանի հայոց թեմի 15-րդ Պատգամաւորական ժողովի ընտրութիւններն ինչպէս սպասուում էր, չկարողացաւ զերծ մնալ կեղծարարութիւններից, ինչի հետեւանքով էլ բողոքարկեցին Սասուն եւ Ջէյթուն քաղաքամասերի հրապարակած նախնական արդիւնքները:

Այսօր առաւօտեան, ԹՀԹ առաջնորդարանում, կեղծարարութեամբ մեղադրող կողմին ենթակայ անձանց ձեռքով եւ մեղադրող կողմի դիտորդի եւ Թեհրանի կուսակալութեան ներկայացուցչի հսկողութեան ներքոյ, հաշարկեց Թեհրանի ամենահայաշատ՝ Սասուն քաղաքամասի, «Թունեան» դպրոցի ընտրատեղամասի քվեների 10 տոկոսը եւ եզրակացուեց, որ՝ թէեւ խախտումներ եղել են «բայց ոչ այնքան, որ կարողանան փոխել ընտրութիւնների արդիւնքները»:

Իհարկէ, մեր կարծիքով դա այդպէս չէ, քանի որ ընդամենը 11 քվեի տարբերութեամբ կարող էր լուրջ փոփոխութիւն առաջանալ արդիւնքներում, ուստի եւ ճիշտ չէր բաւարարել քվեների 10 տոկոսի վերահաշարկումով, բայց եւ միւս կողմից միայն մէկ դիտորդ ունենալը բողոքող կողմից խլում էր լիիրաւ վերահսկելու հնարաւորութիւնը:

Համեմայնդէպս, պիտի արձանագրել ինչպէս Ջէյթուն քաղաքամասի «Մարիամեան» դպրոցի պարագային, այնպէս էլ Սասուն քաղաքամասի երեք ընտրատեղամասերում հաւաքած քվեների պարզ համեմատութիւնը փաստում է, որ «Թունեան» դպրոցում, խախտելով թեմիս կանոնադրութիւնը, քվեների տեղաշարժ է իրականացրել «Նոր հայեացք, կայուն համայնք» խմբակցութիւնը՝ Ղազնակցութիւնը, որին վկայում են ընտրութիւնների օրը՝ նոյեմբերի 16-ին, այդ խմբակցութեան թեկնածուների երկարատեւ անօրէն ներկայութիւնը ընտրատեղամասի շրջակայքում, այդ կուսակցութեան ենթակայ, տարբեր քաղաքամասերում աշխատող, միութիւնների ակտիւիստների ներկայութիւնը Սասուն քաղաքամասում, քվեների մի մասի հաշւելը առանց երկրորդ կողմի դիտորդի ներկայութեան, քվեների մի մասի հաշւումը տեղում ներկայ ուստիկանների ձեռքով եւ այլն: Այս բոլորը խօսում են այն մասին, որ եղել են կոպիտ կեղծումներ, բայց եւ դրանով հանդերձ, շահած քվեների համեմատութիւնը ընդհանուրի մէջ կազմել է 44 տոկոս 56 տոկոսի դիմաց, որը խօսում է այն պարզ իրականութեան մասին որ ժողովրդական կողմը շատ ավելի հզօր է, քան այն, ինչ փորձում են ցոյց տալ դաշնակցականները:

Աղբիւր՝ www.araxnews.com

21/11/2012

ԱԶԱՏ ՄԱԹԵԱՆԻ ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ

Նոյեմբերի 21-ին, Թեհրանի «Հայ ակումբ»-ի դահլիճում կայացաւ միջոցառում նւիրած իրանահայ բանաստեղծ եւ թարգմանիչ, Սպահանի հայագիտական ամբիոնի տարիների դասախօս Ազատ Մաթեանի ծննդեան 70-ամեակին եւ նրա նոր գրքերի հրատարակմանը: Վերջերս լոյս է տեսել նրա բանաստեղծութիւնների նոր հաւաքածոն «Աշխարհի գերբը» խորագրով եւ նրա «Ո՞վ է Չարենցը» աշխատութիւնը: Մեծարանքի երեկոն կազմակերպել էին գրողի ընկերներից կազմած մի յանձնախումբ, հովանաւորութեամբ «Հայ ակումբ»-ի, «Հայ համալսարանականների Ընդ. միութեան», «Իրանահայ գրողների միութեան» եւ «Յոյս» երկ-շաբաթաթերթի: Ներկայ էին նաեւ իրանահայութեան ներկայացուցիչները երկրի խորհրդարանում: Բացման խօսքը յանձնախմբի կողմից ընթերցեց

Բանաստեղծ՝ Նորվանը, յետեյ ելոյթ ունեցան «Յոյս» երկշաբաթաթերթի խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեանը եւ թատերագէտութարգմանիչ՝ Վարուժ Սուրէնեանը: Երիտասարդ ասնուքողներ արտասանեցին Մաթեանի բանաստեղծութիւններից, իսկ Նոր Ջուղայից եկած դերասանները բեմադրեցին «Ամերիկացի Փեսացու» թատերախաղից մի պատկեր: Իր խօսքն ասաց նաեւ Մաթեանի նախկին ուսանող Մաջիդ Թաւուսին, որն սկսեց պարսկերէնով ու աւարտեց հայերէնով, արժանանալով ներկաների խիստ ծափահարութեան: Ծրագրի հաղորդավարն էր թատրոնի բեմադրիչ եւ դերասան Լեւոն Խանգեալդեանը:

Կազմակերպիչ յանձնախմբի անդամներ՝ Ալվարո Թորոսեան, Էլին Շիրանեան, Վարուժ Սուրէնեան, Ռոբերթ Սաֆարեան, Նորվան, Ադիս Իսաղուլեան

Ռոբերթ Սաֆարեան.

Մաթեանի առաջին գրքի խորագիրը՝ Անապատի ծաղիկները, պարզապէս խօսում է այն մասին, թէ սփիւռքեան պայմաններում, հայերէնով բանաստեղծութիւն գրելը ապարդիւն գործ է, ինչպէս անապատում ծաղիկներ աճեցնելը: Ազատի ստեղծագործական ճիգը ապացուցում է, որ նոյնիսկ անապատում կարելի է ծաղիկ աճեցնել, եթէ լինի ստեղծագործական կիրքն ու կամքը:

Վարուժ Սուրէնեան.

Մաթեանի կարծիքով, փնտրտուքը Չարենցի էութեան մի մասնիկն է: Ըստ նրա, Չարենցը գիտակցում է աշխարհի անձանաչելիութիւնը, բայց միաժամանակ նրա պրպտող հոգին եւ գաղտնիքները բացելու ծարաւը թոյլ չեն տալիս նրան վերջ տալու իր որոնումներին: Մի ուրիշ յատկութիւն Չարենցի մօտ, նրա անդադար ձգտումն է դէպի ներդաշնակութիւն, այն էլ այնպիսի կեանքում, որ օրէցօր քառսային է դառնում եւ անկառավարելի:

Մաջիդ Թաւուսի.

Նա մեզ համար միայն հայոց լեզուի դասախօս եւ ուսուցիչ չէր, այլ բոլորի համար մի մտերմիկ իմաստութիւն էր: Մեր համալսարանի մտածկոտ ծերը միայն գրականութիւնը մեկնաբանող չէր, այլ ինքն էլ իր մուսան ունէր: Բանաստեղծութիւնը ոչ ոք նրանից աւելի լաւ չի կարողացել մեզ համար, գեղարուեստը ոչ ոք նրանից աւելի պարզ չի բացատրել մեզ համար, ոչ ոք մեր աչքերի առջեւ նրանից աւելի գեղարուեստականօրէն ու բանաստեղծօրէն չի արտել:



Գեղարուեստական ծրագիր՝

Ասմունքողներ՝
Արգին Արիստակեսեան
Անգինէ Բանդարի
Նայիրի Գալստեան
Դաշնակահար
Նայիրի Գալստեան



Թատրոն՝

Ռաֆիկ Վարդանեան՝ Կարապետ
Էղիկ Խաչիկեան՝ Գասպար
Ռազմիկ Մարկոսեան՝ Աշուղ
Իւրիկ Մարկոսեան՝ Աշուղ
Մալուս Խախանեան՝ Աշուղ

Ազատ Մաթեան.



Ուզում եմ խոստովանել, որ էս երկուսը՝
Ազատ Մաթեանն ու Ծատուրօղլին,
այլեւս իրար հետ չեն սազում: Մէկը
միւսին նախանծում է: Երբ Ազատը
Հանդէս եռամսեայում սկսեց տպագրել,
Ծատուրօղլին նախանծութիւնից պայթում
էր, բայց Հանդէսի խմբագիրը՝ Սուրէնեանը
պատրաստ չէր նրա գործերը տպել եւ
ասում էր մենք շատ մոդէռն եւ փոստ-
մոդէռն մարդիկ ենք, մեզ վայել չէ նման
բաներ տպագրելը:

Միջոցառման ընթացքին արտայայտեց
նաեւ Ազատ մաթեանի երկար տարիների
ընկեր եւ նրա վերջին գրքերի մեկենաս՝
Հրաչ Միրզախանեանը: Նա ասաց, որ
Ազատին կարելի է դիմել ցանկացած դժա-
րութեան ժամանակ եւ նա միշտ պատ-
րաստ է լսել եւ օգնել: Նա ընթերցեց նաեւ
արտասահմանում բնակող Ազատի մի
բանի մտերիմ ընկերների ուղերձները:

Ծրագրի հաղորդավարն էր իրանակա-
նադահայ դերասան-բեմադրիչ՝ Լեւոն
Խանգեալդեանը: Լեւոնը կազմակերպիչ
յանձնախմբին օգնել էր նաեւ որպէս
գեղարուեստական ծրագրի ձեւաւորման
գործում: Նա ծրագրերի զանազան մասերի
միջեւ ինքն էլ արտասահմանում էր Ազատի
թարգմանութիւններից եւ բանաստեղծու-
թիւններից:



**ԼԵՒՈՆ ԱՅԱՐՈՆԵԱՆԻ
ՀԱՐՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻՑ
ԵՒ ԻՐԱՆՈՒՄ ՀՀ
ԴԵՍՊԱՆԻՑ
ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**



«Յոյս»-ի համար 135-ում Կարսի պայմանագրի մասին տպագրած յօդածի տեղեկությունների հիման վրայ, թերթիս արտոնատեր՝ Լեւոն Ահարոնեանը առանձին նամակներ է յղել ՀՀ արտգործնախարար՝ Էդարդ Նալբանդեանին և Իրանում ՀՀ դեսպան՝ Գրիգոր Առաքելյանին և նրանցից խնդրել է լուսաբանել այդ պայմանագրի ներկայ վիճակը: Ստորև ներկայացնում ենք նամակների պատճենը:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ. ԻՐԱՆԻ ԴԵՄ ԿԻՐԱՌԻՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՎՆԱՍՈՒՄ ԵՆ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ



«Իրանի դեմ կիրառուղ միջազգային պատժամիջոցները շատ ուժեղ հարվածում են մեր տնտեսությանը, քանի որ մենք այսօր երկու ելք ունենք դեպի միջազգային շուկա՝ Վրաստանով ու Իրանով»,-«Ինտերֆաքս»-ին տված հարցազրույցում ասել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Նրա խօսքերով, Իրանի դեմ կիրառվող միջազգային պատժամիջոցները զրոյացնում են Իրանի հետ աշխատելու Հայաստանի հնարավորությունները, այդ թվում բեռնավորխաղրումների առումով:

«Ղա շատ լուրջ խնդիրներ է ստեղծում, այդ իսկ պատճառով առեւտրաշրջանառության ցուցանիշը Իրանով եւ Իրանի հետ փոքր է: Խնդիրներ են առաջանում նաեւ Մերձավոր Արեւելք արտահանում իրականացնելու հարցում, ինչը կրճատում է դիվերսիֆիկացիայի հնարավորությունը, բարդ մրցակցային պայմաններ է ստեղծում տրանսպորտային ծախսերի ավելացման հաշվին: Իրանի կողմից ներդրվող սահմանափակումները, այդ թվում՝ արժույթային գործողությունների վրա, զսպում են տնտեսվարող սուբյեկտների կապերը Հայաստանի ու Իրանի միջեւ, իսկ այդ ամենը շատ բացասական է ազդում մեր տնտեսության վրա»,-ասել է նա:

Նա նաեւ նշել է, որ բոլոր այդ հարցերը բարձրացվում են արեւմտյան գործընկերների հետ հանդիպումներում «ԵՄ-ն, Արժույթի միջազգային հիմնադրամը, համաշխարհային բանկը, բոլորն էլ հասկանում են, որ այդ ամենը լուրջ վնաս է հասցնում մեր տնտեսությանը: Չնայած, ոչ միայն մեր տնտեսությանը: Շատ եվրոպական երկրներ եւս միջազգային պատժամիջոցների պատճառով որոշակի խնդիրներ են ունենում»:

Իրանից Հայաստան երկաթգծի ու նավթամուղի կա-

ռուցման վերաբերյալ բանակցություններին անդրադառնալով, Տիգրան Սարգսյանն ասել է՝

«Մենք մեր իրանցի գործընկերների հետ հուշագիր ենք ստորագրել այդ երկու կարեւորագույն ենթակառուցվածքային նախագծերի իրականացման նպատակահարմարության, դրանց իրականացման անհրաժեշտության եւ երկկողմանի պարտավորությունների մասին: Երկաթգծի առումով, մենք համաձայնագիր ենք կնքել օպերատորի հետ, ով Հայաստանի տարածքում նախագծի ֆինանսավորումն իրականացնել պատրաստ մասնավոր ներդրողներ է փնտրում: Իր հատվածի ֆինանսավորումն իրականացնելու է իրանական կողմը: Ինչ վերաբերում է նավթամուղին, այժմ աշխատում ենք տեխնիկական խնդրի վրա եւ այդ նախագծի ծախսատարության գնահատման, ժամկետների ու արժեքի վրա: Այդ երկու հարցերն էլ հայիրանական հարաբերությունների օրակարգում են»:

Վարչապետն ընդգծել է, որ միջազգային պատժամիջոցներն իհարկե դժվարացնում են նավթամուղի կառուցմանն ուղղված աշխատանքները, ազդում են դրանց արդյունավետության ու իրականացման ժամկետների վրա:

«Վերջերս, սակայն, մենք Իրանի հետ սահմանին Հիդրոէլեկտրակայանի կառուցում ենք սկսել: Ղա համատեղ նախագիծ է, որը ֆինանսավորվում է մեր Իրանի գործընկերների կողմից: Մենք այս նախագիծը սկսել ենք նախանշված ժամկետից ուշացումով: Նույնը վերաբերում է նաեւ մյուս երկու նախագծերին: Որոշակի ուշացումով, բայց մենք ճիշտ ուղու վրա ենք»,- ասել է վարչապետը:

Ինչ վերաբերում է Իրանի միջուկային ծրագրին եւ Իսրայելի կողմից՝ Իրանին հարվածելու հավանականությանը, Տիգրան Սարգսյանը նշել է, որ դա շատ վատ կանդրադառնա տարածաշրջանի վրա եւ Իրանի ուղղակի հարեւանների վրա:

«Ղա կարող է բացասական իրադարձությունների շղթա առաջացնել, որոնք հետագայում շատ դժվար կլինի կանգնեցնել: Մեր դիրքորոշումը հետեւյալն է՝ մենք կողմ ենք բոլոր հարցերի լուծմանը խաղաղ բանակցային գործընթացի միջոցով: Շատ կարեւոր է, որ ատոմի խաղաղ օգտագործման հարցում Իրանին հաջողվի պայմանավորվել միջազգային հանրության հետ», ընդգծել է վարչապետը:

Աղբիւր՝ eMedia.am / 26.11.2012

ԱՄԷՆ ԲԱՆ ԲՈՒՍԱԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՄԻՍ ՈՒՏԵՆ, ԹԷ՞ ՉՈՒՏԵՆ



Մսից եւ կենդանական ծագման այլ սննդատեսակներից հրաժարողների թիւն աշխարհում օրըստօրէ աճում է, ինչը սննդաբանների եւ լայն հասարակութեան շրջանում իրարամերժ քննարկումների տեղիք է տալիս: Արդիւնքում հարց է ծագում. «Միս ուտե՞լ, թե՞ չուտել»:

Փիլիսոփայութիւն, քմահաճութիւն, թե՞ ուշադրութիւն սեփական առողջութեան նկատմամբ

Տարբեր մեկնաբանութիւններ ունի «բուսակերութիւն» (լատիներէն vegetatio՝ բուսականութիւն բառից) բառը, եւ բոլորի իմաստը նոյնն է. մարդկային օրգանիզմի համար բնական է համարուում միայն բուսական ծագման սնունդը, իսկ կենդանական ծագում ունեցողը անթոյլատրելի երեւոյթ է, քանզի այն հետեւանք է կենդանու մահուան:

Բուսակերներին կարելի է բաժանել մի քանի հիմնական խմբերի:

Առաջին խմբի ներկայացուցիչները «վեգաններն» են, որոնք իրենց սննդակարգում խիստ սահմանափակումներ են մտցնում: Վերջիններս իրենց սննդից իսպառ բացառում են կենդանական ծագման մթերքը՝ օգտագործելով միայն բանջարեղէն, միրգ, հատիկաւոր եւ այլ բոյսեր: Նոյնիսկ կաթնամթերքի ստացման ժամանակակից տեխնոլոգիաները, ըստ վեգանների, իրականացւում են կենդանիների շահագործման հաշւին, ինչը խախտում է բուսակերութեան հիմնական կանոնները: Այս խմբի որոշ ներկայացուցիչներ ծայրայեղ բուսակերներ են, որոնց «հումակեր» կամ «նատուրիստներ» են անւանում: Նրանք բուսական սննդամթերքն ուտում են միայն իրենց բնական ձեւով՝ առանց որեւիցէ մշակման, եւ ընդունում են միայն հա-

տիկաւոր բոյսերի խոշոր աղացման տարբերակը:


Երկրորդ խմբի ներկայացուցիչներն, այսպէս կոչւած, լակտոբուսակերներն են, որոնք իրենց սննդակարգում բուսական ծագման սննդից զատ ներառում են նաեւ կաթն ու կաթնային հիմք ունեցող մթերք: Այս խմբի «փիլիսոփայութիւնը», ըստ սննդաբանների, ւաւելի խելամիտ է:

Գոյութիւն ունի նաեւ լակտոբուսակերների մէկ այլ խումբ, որը չի բացառում նաեւ ծու ուտելը: Վերջիններիս անւանում են լակտովոբուսակերներ:

Երբեմն, սխալմամբ, բուսակեր են անւանում նաեւ այն մարդկանց, ովքեր չեն ուտում միայն խոշոր եւ մանր եղջերաւոր կենդանիների եւ թռչնի միս, սակայն իրենց սննդակարգում մեծ տեղ են տալիս ձկնեղէնին եւ ծովային այլ բարիքներին: Այսպիսի «կիսաբուսակեր» մարդկանց թիւը մեծ է, սակայն նրանց ո՛չ իրական բուսակերները, ո՛չ էլ միս նախընտրողներն իրենց «բանակից» չեն համարում:

Բուսակերութեան հիմնական դրդապատճառները

Անցեալում մարդիկ հրաժարուում էին «սպանդային» կերակրից՝ լոկ կրօնական կամ փիլիսոփայական նկատառումներից ելնելով, համաձայն որոնց, իւրաքանչիւր կենդանի արարած, ինչպէս եւ մարդը, ապրելու իրաւունք ունի: Կաթոլիկ եւ ուղղափառ ժողովուրդների մօտ բուսակերութիւնը հիմնականում տարածւած է վանականների շրջանում: Աշխարհիկ մարդկանց համար գոյութիւն ունեն պահքի շրջաններ, որոնց ժամանակ միս ուտելն արգելւած է: Բուսակերութիւնը տարածւած է նաեւ մահմեդական երկրների մոլեռանդ կրօնապաշտների շրջանում: Բուդայականների եւ



ԲՈՒՍԱԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԻՐԱՄԻՆԸ

հինդուականների գրեթե մեծամասնությունը բացառում են միս ուտելը (այդ թվում նաեւ կրիչնայիտները): Հաւատալով հոգու վերածնմանը, նրանք այն կարծիքին են, որ սպանող իւրաքանչիւր ձկան, եղջերաւոր անասունի կամ նոյնիսկ գորտի հոգին կարող է այնուհետեւ «հանգրւանել» մարդու մարմնում. ահա թէ ինչու կենդանուն սպանելը հաւասարազօր է մարդ սպանելուն:

Ընդհանուր առմամբ, գրեթե բոլոր կրօնական համակարգերում մսակերութիւնից հրաժարւելը հոգին մաքրելու եւ կատարելութեան հասնելու կարելու նա-

խապայման է: Որոշ դէպքերում նման զոհողութեան գնալը միայն ընտրեալների համար է, որոշ դէպքերում էլ՝ պարտադիր տւեալ ուսմունքը դաւանող իւրաքանչիւր մարդու համար:

«Բուսակերութիւն» տերմինը շրջանառութեան մէջ է դրւել 1842 թ. «Բրիտանացի բուսակերների միութեան» կողմից, ընդ որում, ի սկզբանէ այն նշանակել է ոչ թէ զուտ բուսակերութիւն, այլ բարոյական եւ փիլիսոփայական առումներով ներդաշնակ կենսակերպ: Մեր օրերում մսակերութիւնից հրաժարւում են ոչ այնքան էթիկայի եւ բնապահպանութեան նկատա-




ռուններով, որքան առողջութիւնը պահպանելու եւ երկարակեցութիւն ապահովելու համար: 1987 թ. գերմանական համալսարաններից մէկի կողմից իրականացած սոցիոլոգիական հարցումների արդիւնքում պարզել է, որ արեւմտեան երկրներում բուսակերութեան անցնելն ունի հետեւեալ դրոյապատճառները.

- առողջութիւնը պահպանելու ձգտում (78%),
- էթիկա (69%),
- բնապահպանութիւն (35%),
- էսթետիկա (28%),
- կրօնական (23%),
- փիլիսոփայական (22%),
- տնտեսական (19%) եւ
- հիգիենիկ (9%):

Ամէնից շատ բուսակերներ կան երկու տարիքային խմբերում, որոնք են՝ 16-24 եւ 55-64 տարեկան մարդիկ: Որպէս կանոն, երիտասարդներն

աւելի հոգատար են կենդանիների հանդէպ եւ չեն ուզում նոյնիսկ անուղակի առունով «մասնակից» լինել վերջիններիս սպանողին: Ինչ վերաբերում է տարեցներին, ապա նրանք աւելի շատ հոգ են տանում իրենց առողջութեան մասին: Մեր օրերում բուսակերութեան ջատագովների թիւն աշխարհում օրէցօր աճում է եւ շուտով կը հասնի 1 մլրդ-ի: Այս առունով աշիւծի բաժինն ընկնում է Հարաւ-Արեւելեան Ասիայի բնակիչներին (միայն Հնդկաստանի բնակչութեան մօտ 80%-ը միս չի ուտում): Եւրոպայում եւ Ամերիկայում մսակերութեան դէմ պայքարողների թիւը տատանում է 7-10%-ի միջեւ: Բուսակերներն այլեւս «սպիտակ ագռաւներ» չեն. գնալով աւելանում է բուսակերների համար նախատեսած ճաշարանների եւ ռեստորանների թիւը, իսկ այդ վայրերում ճաշողների համար ստեղծել է յատուկ միութիւն, որը պաշտպանում է բուսակերները:

«ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ» ԳԻՐՔԸ



1975 թ.ականին Աւստրալիայում հրատարակեց «Կենդանիների ազատագրումը» խորագրով մի գիրք, որը մեծ ընդունելութիւն գտաւ ողջ աշխարհում կենդանիների իրաւունքները պաշտպանող շարժման հետեւորդների շրջանակներում: Գրքի հեղինակ՝ Պիտեր Սինգերը, իհարկէ, մերժում է օգտագործել «իրաւունքներ» եզրը, երբ խօսքը մարդու եւ այլ կենդանիների յարաբերութիւնների կարգաւորման մասին է: Նրա կարծիքով, մարդիկ պիտի նկատի առնեն կենդանիների բարեկեցութեան վերաբերող հարցերը, քանի



որ կենդանիները ունակ են զգալու ցաւը: Նրա տեսակէտները համապատասխանում են bio-centrism (կենսակենտրոն) փիլիսոփայութեան սկզբունքներին: Սինգերը դէմ է կենդանիների շահագործմանը եւ հաւատացած է, որ պիտի հնարախարհին չափ պակսեցնել ողջ կենդանի աշխարհի ցաւը:

րի շահերը: Այդ միութեան անդամներն ակտիւ մասնակցութիւն են ցուցաբերում հանրային եւ գիտական քննարկումներին եւ փորձում են հնարաւորինս լաւ ներկայացնել բուսակերութեան առաւելութիւնները: Սակայն, այնուամենայնիւ, բիֆշտեքսների սիրահարները չեն շտապում զիջել իրենց դիրքերը: Բուսակերութեան զարգացման գործում մեծ դեր է խաղացել կենդանիների պաշտպանութեանն ուղղւած շարժումը եւ, մասնաւորապէս, աստրալիացի գիտնական Պիտեր Սինգերի աշխատութիւնները: Իր «Կենդանիների ազատութիւն» գրքում Սինգերն ամենայն մանրամասնութեամբ նկարագրում է կենդանիների ու թռչունների բուժման եւ սպանդի աննկարագրելի դաժան պայմանները: Հեղինակը նշում է, որ միայն անզօրութիւնը, անտարբերութիւնն ու անզուսպ որկրամոլութիւնն են մարդուն ստիպում չհրաժարել այնպիսի տզեղ սովորութիւնից, ինչպիսին մսակերութիւնն է: Պիտեր Սինգերի գիրքը մեծ յեղափոխութիւն առաջացրեց մարդկային գիտակցութեան մէջ:

Միս. կողմ թէ՛ դեմ

Ժամանակակից սննդաբանութիւնը, հիմնւելով ֆիզիոլոգիայի եւ բիոքիմիայի դասական հետազոտութիւնների վրայ, խորհուրդ է տալիս սնել թէ՛ բուսական եւ թէ՛ կենդանական ծագման սննդամթերքով: Գիտնականները պարզել են, որ կենդանական ծագման մթերքում մարդու օրգանիզմի բնականոն գործունէութեան համար անհրաժեշտ ամինաթթուների քանակը կրկնակի անգամ աւելի շատ է, քան բուսական ծագման մթերքում: Բուսակերութեան պարագայում օրգանիզմի սպիտակուցների եւ, յատկապէս, ամինաթթուների պակասը լրացնելու համար անհրաժեշտ է ուտել շատ մեծ քանակութեամբ հատիկաւորներ, իսկ մարսողական համակարգի օրգանների համար բջջանիւթի մեծ քանակութիւնը կարող է լուրջ խախտումների յանգեցնել: Բացի այդ՝ բուսական ծագման սպիտակուցն աւելի դժարութեամբ է մարսւում, քան կենդանական ծագմանը:

Աւելին, ծուն, միսը, լեարդը եւ ձկան իւղոտ միսը հարուստ են մի շարք կենսական կարեւորութիւն ունեցող վիտամիններով: Այս պարագայում սննդաբանների մի խումբ եկել է այն եզրակացութեան, որ բուսակերութիւնը յղի է օրգանիզմում B12 վիտամինի քաղցի



առաջացմամբ, վիտամին, որը կարեւորագոյն դեր ունի արիւնաստեղծման համար:

Այսպիսով, հետեւելով այն տեսակէտին, որ մսից եւ ձկնեղէնից հրաժարելը կարող է յանգեցնել օրգանիզմում սպիտակուցների եւ որոշ վիտամինների պակասին, եւրոպացիները շարունակում են կենդանական ծագման սնունդ օգտագործել:

Բուսակերները, սակայն, այս տեսակէտին թերահաւատութեամբ են մօտենում եւ պարզաբանում, որ հազարամեակներ շարունակ աշխարհի շատ ու շատ ժողովուրդներ «մի կտոր միս» անգամ չեն կերել եւ, այդուամենայնիւ, առողջ եւ երկարակեաց են եղել:

Մսի օգտագործումը սննդի մէջ աւելի մեծ զարգացում է ապրել յատկապէս XX դարում, երբ մարդկութիւնը յայտնագործել է սառնարանը: Մսակերութեան ընդդիմադիրները միաձայն պնդում են, որ ֆիզիոլոգիական

տեսանկիւնից մարդ արարածի օրգանիզմն աւելի լաւ է մարսում բուսական ծագման սնունդը: Որպէս կանոն, մսակերների մօտ շատ յաճախ փորկապութիւններ եւ աղիքային ինտոքսիկացիաներ են արձանագրւում, ինչը պայմանաւորւած է օրգանիզմի կողմից մսամթերքի դանդաղ մարսելու հետ: Մսի չարաշահման պարագայում օրգանիզմում կուտակւում են մեծ քանակութեամբ ազոտական միացութիւններ, ինչի արդիւնքում թթաւիմնանային հաւասարակշռութիւնը խախտւում է, եւ կարող

են զարգանալ այնպիսի հիւանդութիւններ, ինչպիսիք են՝ միգրաթեային դիաթեզը եւ պոդագրան: Ինչպէս բուսակերներն են նշում, կենդանու քաշն աւելացնելու եւ մի շարք հիւանդութիւնների դէմ պայքարելու նպատակով անասնաբոյժները յաճախ նրանց հորմոնալ միջոցներ են տալիս, տարբեր պատաստումներ են կատարում եւ հակաբիոտիկներ ներարկում, որոնց ազդեցութիւնը մարդկային օրգանիզմի վրայ, որպէս կանոն, հաշի չի առնւում: Շատ յաճախ մարդու մօտ վարակիչ հիւանդութիւնների պատճառ կարող են դառնալ կենդանական ծագման սննդի օգտագործումը:

Այժմ խօսենք սպիտակուցների մասին: Եթէ հաշի առնենք այն հանգամանքը, որ մարդու օրգանիզմի համար սպիտակուցների օրական անհրաժեշտ պաշարը միջինում պէտք է կազմի 150 մգ, ապա միայն բուսական ծագման սնունդ ընդունելու պարագայում



Սոկրատես




Ժան-ժակ Ռուսո




Լև Տոլստոյ



Մահաթմա Գանդի



Ջորջ
Բեռնարդ Շոու



Էյնշտեյն

ԱՆԻԱՆԻ ԲՈՒՍԱԿԵՐՆԵՐ

Բուսակերները յաճախ են մէջբերում այն հռչակաւոր մարդկանց անունները, որոնք բուսակեր են եղել: Ըստ նրանց, բուսակերութեամբ մարդկութեան լաւագոյն ներկայացուցիչների հետ մի շարքում կը յայտնուէք, այնպիսիներ, ինչպիսիք են՝

- Պիլթագորասը
- Սոկրատեսը
- Պլատոնը
- Պլուտարքոսը
- Լեոնարդո դա Վինչին
- Մոնտենը
- Ակբար Մեծը
- Ջոն Միլտոնը
- սըր Իսահակ Նիուտոնը
- Վոլտերը
- Բենջամին Ֆրանկլինը
- Ժան-ժակ Ռուսոն
- Լամարտինը
- Պերսի Բիշօ Զեյլին
- Ռալֆ Ուոլդո Էմերսոնը
- Լև Տոլստոյը
- Ջորջ Բեռնարդ Շոուն
- Ռաբինդրանաթ Տագորը
- Մահաթմա Գանդին
- Ալբերտ Շայնշտայնը
- Էյնշտեյնը
- և շատ այլք:

սպիտակուցային քաղցի զարգացումը լիովին հաւանական է դառնում: Սակայն ճապոնիայում, Մեծ Բրիտանիայում եւ Միացեալ Նահագներում անցկացած որոշ հետազոտութիւններ ցոյց տւեցին, որ օրական 50-85 մգ սպիտակուցն էլ լիովին բաւարար է, որպէսզի մարդ արարածը լաւ ինքնազգացողութիւն, դիմադրողականութիւն եւ աշխատունակութիւն ունենայ: Ըստ այդ հետազոտութիւնների՝ միայն կերակրող մայրերի եւ դեռահասների օրգանիզմն է, որ օրական առնազը 100 մգ սպիտակուցի կարիք ունի: Այս թւերն անհրական են զուտ բուսակերութեամբ ապրող մարդկանց համար, եւ իսկապէս, շատ դժուար է օրգանիզմին անհրաժեշտ ամինաթթուների պաշարը լրացնել միայն բուսական ծագման սպիտակուցներով: Այդ իսկ պատճառով սննդաբանները բուսակերներին խորհուրդ են տալիս չհրաժարուել կաթնամթերքից, որը լիարժէք սպիտակուցների բնական աղբիւր է: Կաթի եւ ձիւ մէջ մեծ քանակութեամբ B12 վիտամին կայ, ուստի լակտոբուսակերները հնարաւորութիւն ունեն խուսափել դրա քաղցից: Իսկ նրանց համար, ովքեր իսպառ հրաժարում են կենդանական ծագման սննդից, B12-ի անհրաժեշտ պաշարն ապահովելու համար յատուկ նպատակով մշակուել եւ ստացուել է մթերք, որի մէջ մեծ քանակութեամբ սոյայ եւ հատիկաւորներ կան:

Ի շահ առողջութեան

Մսից հրաժարուելու օգտակարութիւնը գնահատելու նպատակով ներկայացնենք ընդամենը վիճակագրական հետազոտութիւնների որոշ տւեալներ, որոնցում համեմատում են բուսակերների եւ խառը սնունդ նախընտրողների շրջանում տարբեր հիւանդութիւնների առաջացման հաւանականութիւնը:

Բուսակեր տղամարդիկ շաքարային դիաբետով հիմնականում չեն հիւանդանում, իսկ խառը սնունդ նախընտրողների մօտ՝ հիւանդացութիւնը կազմում է 2,6%: Խառը սննդին նախապատուութիւն տուող կանանց շրջանում հիւանդանալու հաւանականութիւնը բուսակերների համեմատ կրկնակի բարձր է:

Խառը սնունդ նախընտրող տղամարդիկ 2, իսկ կանայք՝ 5 անգամ աւելի շատ են տառապում զարկերակային զերճնշմամբ, քան բուսակերները:

Բազմաթիւ գիտական հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ բուսակերների արեան մէջ խոլեստերինի եւ այլ աթերոզէն լիպիդների քանակութիւնը նազագոյն մակարդակի է, ինչը նրանց հնարաւորութիւն է տալիս խուսափել մի շարք սրտանօթային հիւանդութիւններից եւ դրանց բարդացումներից, այդ թւում նաեւ սրտամկանի ինֆարկտից: Վիճակագրական տւեալների համաձայն, մսակեր տղամարդկանց շրջանում սրտամկանի ինֆարկտի հաւանականութիւնը 5 անգամ աւելի մեծ է, քան բուսակեր տղա-

մարդկանց մօտ:

Բջջանիթով հարուստ բուսական սնունդ օգտագործելը նպաստում է մարսողական համակարգի օրգանների օպտիմալ գործունեությանը եւ խոչընդոտում փորկապութիւնների առաջացմանը: Խառը սնունդ ընդունող տղամարդկանց մօտ լեարդի, լեղապարկի, լեղուղիների եւ ենթաստամոքսային գեղձի հիւանդութիւնները 2 անգամ ավելի շատ են գրանցուում, քան բուսակեր տղամարդկանց մօտ:

Բժշկական գրականութիւնը եւս պնդում է, որ չարորակ նորագոյացութիւնների առաջացումը ինչ-որ չափով պայմանաւորուած է մսի, ձիւ, պանրի եւ կենդանական ծագում ունեցող ճարպերի ու սպիտակուցների չարաշահմամբ: Որոշ տւեալների համաձայն, շաքաթական մէկ անգամ տաւարի, խոզի կամ ոչխարի միս ուտելը աղիների քաղցկեղով հիւանդանալու հաւանականութիւնն ավելացնում է 40%-ով, իսկ շաքաթական 5-6 անգամ ուտելու պարագայում այդ հաւանականութիւնն ավելանում է 80%-ով:

Վերոնշեալ տւեալները բուսակերներին հիմք են տալիս կարծելու, որ իրենց սնւելու կարգն ավելի ռացիոնալ է, եւ այն թոյլ է տալիս երկարացնել կեանքի տւելոյութիւնն ու կանխել մի շարք հիւանդութիւնների զարգացումը: Եթէ ժամանակակից սննդաբանները որոշակի վերապահութեամբ են մօտենում վեգանների սնւելու կարգին, ապա լակտոբուսակերների կողմից առաջարկուող սնւելու մեթոդները ֆիզիոլոգիական տեսանկիւնից կատարելապէս ընդունելի են, քանի որ դրանք ամբողջութեամբ բաւարարում են օրգանիզմի բնականոն գործունեութեան համար անհրաժեշտ սննդի պաշարները: Ի դէպ, մսամթերքից հրաժարելու անվըտանգութիւնը պաշտօնապէս հաստատուել է նաեւ ամերիկեան սննդաբանների ասոցիացիայի կողմից: Ժամանակակից սննդաբանութիւնը, հիմնւելով ֆիզիոլոգիայի եւ բիոքիմիայի դասական հետազօտութիւնների վրայ, խորհուրդ է տալիս սնւել թէ՛ բուսական եւ թէ՛ կենդանական ծագման սննդամթերքով: Հնդկաստանի հնագոյն փիլիսոփայական ուսմունքներից մէկի՝ ջայնիզմի կանոնները, կեանքի բոլոր ձեւերի նկատմամբ հոգածութիւնն ու յարգանքը հասցրել են կատարելութեան: Անշնար մժեղին կամ թրթուրին պատահաբար չվնասելու համար որոշ ջայնիստներ քայլելիս յատուկ փոքրիկ ավելներով ավում են իրենց առջեւի հողը կամ իրենց հագուստին փոքրիկ զանգակներ են կախում, որպէսզի կենդանիներին «նախազգուշացնեն» իրենց մօտենալու մասին: Իսկ պատահաբար ջրի հետ որեւէ չնչին օրգանիզմ կուլ չտալու նպատակով ջայնիստները նախապէս ֆիլտրում են ջուրը:

Աղբիւր՝ www.med-practic.com

ԲՈՒՍԱԿԵՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Վեգաններ



Իրենց սննդից իսպառ բացառում են կենդանական ծագման մթերքը՝ օգտագործելով միայն բանջարեղէն, միրգ, հատիկաւոր եւ այլ բոյսեր: Նոյնիսկ կաթնամթերքի ստացման ժամանակակից տեխնոլոգիաները, ըստ վեգանների, իրականացնում են կենդանիների շահագործման հաշիւն, ինչը խախտում է բուսակերութեան հիմնական կանոնները:

Լակտոբուսակերներ



Իրենց սննդակարգում բուսական ծագման սննդից զատ ներառում են նաեւ կաթն ու կաթնային հիմք ունեցող մթերք: Այս խմբի «փիլիսոփայութիւնը», ըստ սննդաբանների, ավելի խելամիտ է:

Լակտովորոբուսակերներ



Լակտոբուսակերների մէկ այլ խումբ չի բացառում նաեւ ձու ուտելը:

Կիսաբուսակեր



Երբեմն, սխալմամբ, բուսակեր են անւանում նաեւ այն մարդկանց, ովքեր չեն ուտում միայն խոշոր եւ մանր եղջերաւոր կենդանիների եւ թռչնի միս, սակայն իրենց սննդակարգում մեծ տեղ են տալիս ձկներէնին եւ ծովային այլ բարիքներին:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԴՐԱՆԻՑ ԲԱԴԹԱՐ

Ծառուրոզլու ասած

Տեսք, ինչ դիմաթ էլավ քսանմեկերորդ դարումը,
Հարավումը վեճ ու կռիվ, հյուսիսում նրանից բաղթար:
Ինչ թանգութուն ու սով էլավ էս լեն ու բոլ աշխարումը,
Արևելքը խառն ու խռիվ, արևմուտ՝ նրանից բաղթար:

Եվրոպական երկրներում «տնտեսական կրիզիս» է,
Արաբական աշխարհումը «հեղափոխական մայիս» է,
Գեղ ու քաղաք պայթեցնում են, աշխարհն արյան բաղանիս է,
Լիբիա , Իրաք ու Աֆղան, Սուրիա նրանից բաղթար:

Իրար հետ կռիվ են տալիս այսռումը ձին ու ջորին,
Մեջտեղումը խեղճ էշըն է քացի ուտում իրա փորին,
Քյասիթ մարդիկ թանգութունից վայ են տալիս իրանց օրին,
Հավի գինը տուն է քանդում, ձվինը նրանից բաղթար,

Կանաչն ի՞նչ է, կանաչ խոտը էլավ քիլոն իրեք հզար,
Մարդու ջանը դող է ընկնում, եփ կնիկն էրթում է բազար,
Մե քիչ ռեհան, մե քիչ թառա, մե կես քիլո բողկ ու գազար,
Հորթի միսըն, էլավ ոսկի, գառանը նրանից բաղթար:

Ասի, կնիկ, միս չենք ուտի, առողջությանը վնաս է ,
Կուտենք խաշած բանջարեղեն, հենց բռնե թե ծոմ ու պաս է,
Կեսօրիքը տուր հաց ու սոխ, քշերներն էլ թթու մախոխ,
Ասավ. սոխն էլ է թանգցի, սխտորը նրանից բաղթար:

Անցյալները էժան բանին ասում ինք. էս ջրի գին է,
Ջուրը լցրել շշերու մեջ, ասում են. էս հանքային է,
Վայ՛, ձեր տունը չքանդվի, ախեր էլ էս ի՞նչ օյին է,
Ջուրն էսօր բենգինից թանկ է, բենգինը նրանից բաղթար:

Ուտելիքին փող ես տալիս, չես իմանում բերնիդ համը,
Շիմիայի քութ են տալիս ու կապում են խալխի դամը,
Աստված չանի, այ ժողովուրդ, հանկարծ ցավա ձեր ատամը,
Քաշելը բաղթախտութուն է, սարքելը նրանից բաղթար:

Աչք ես թեքում, ամսավերջ է, պիտի ցնծաս տանդ վարձը,
Կնիկդ էլ հեյ միտդ է քցում ամուսնության տարեդարձը,
Դե , հիմի արի, հալլ արա խանումիդ նվերի հարցը,
Օսկու գինը փիր է վառում, դոլարը նրանից բաղթար:

Աղջիկ ունես պսակելու, փող օր չունես ուզող չկա,
Տղեդ հարուստ հարս է ուզում, իրար զցող, դող չկա,
Աղքատ հեր ես, խրատներիդ անգաջ դնող, լսող չկա,
Կինդ էրես է թեքում քեզնից, էրեխեդ նրանից բաղթար:

Ու՞մ ձեռին է թելի տուտը, ո՞վ է առնում, ո՞վ է տալում,
Վալլա ես էլ շվարել եմ, խալխի գլխին ի՞նչ է գալում,
Աշուղ Սայթա Նովի նման Ծառուրոզլին ասավ, գալում,
«Էրեկ լավ էր , քանց վուր էսօր», էգուցը սրանից բաղթար:

Մերս ասում էր. «Ծառուրոզլի , դու ծնվել ես սովի տարին,
Պատերազմ էր ու թանգութուն, վեց դռան էր մե ջամ գարին,»
Ես ծերացա, ջահելների աղթաթը թող անի բարին,
Գալս պատերազմով էլավ, էրթալս՝ նրանից բաղթար:



Օգոստոս 2012 / Նոր Ջուղա

ՏՈՒՆԴԱՐՁԻ ԿԱՐՕՏԱԽՏ

Յովսէփ Նազլումեան
Նկիրում եւ Աւօ Յարութիւնեանին

*
Մառախտուղի մէջ ձմեռւայ՝ կորած շաւիղ
Եւ մի տղայ, սրտին որբ՝ մեղմ գգւանք տաղի
(Դու յիշում ես) կանգնած, ձեռքին համեստ տաւիղ
Եւ վիշապ-հողմ բոցակիզող ու կատաղի

1/12/84

*
Գգուող գրկի մէջ գորշ մառախտուղի
Սիրտս թաքցրած, յիշում եմ յաճախ
Քեզ եւ նշոյլը բարձրացող մխի
Ցուրտ օրերի մէջ խաւարած օջախ
Նոր կրակներ եւ սրտիս խոստանում
Որ յառնի մի պահ մի այլ ոստանում

25/3/87

*
Ասաց գրիր, գրիր արագ
Երգդ հագիւ մարած կրակ,
Գուցէ յանկարծ վառւի կրկին
Եւ բարձրանայ մուխը բարակ

17/9/86

*
Օրեր տանում էք ինձ ու՞ր
Փութով անմիտ եւ իզուր
Երբ չեմ հասնում ոչ մի տեղ
Խռով ծովի մէջ այս նեղ
Ալիքների մէջ ձեր հոծ
Անհաշտ, անջատ հողմակոծ
Չկան անգամ երկու օր
Որ կազմեն խեղճ մի օրօր

17/9/86

*
Առանց անկիւն
Օրերն անգոյն
Օղակ-օղակ
Քո մէջ քաղաք
Հիստում եմ կոյր
Շղթայ հաստ, կուռ
Ու կաշկանդում
Ինձ քո բանտում

30/5/92

*
Յորձանք տուող հոծ ամբոխում
Հոսանքի հետ քայլ ես փոխում
Եթէ կանգնես քարէ պահակ
Կը ծեծի քեզ ամէն կոհակ
Պիտի դառնաս փշուր, փոշի
Կամ հողմերի մէջ թուփ փշի

25/2/87

*
Մի պահ ինձ հետ մի պահ հեռու
Արել ես ինձ շրջիկ ուրու
Շեղում եմ ես՝ շրջնոլիկ հուր
Կորածներին խաւարում կոյր
Ինքս էլ կորած, հալածւած ճորտ
Ոչ ուղեկից, ոչ առաջնորդ
Գիշերայ մէջ մեղմ ու բարի
Չկայ նշան ճանապարհի

4/4/86

*
Կանգնել էր մարդը վերացած
Ու նայում էր կամուրջից ցած
Դէմքը դատարկ, աչքերն անթարթ
Եւ հոսում էր գետը հանդարդ

30/4/85

*
Ամպերի տակ գմրուխտ արօտ
Մոխիր սրտի մարմանդ կարօտ
Առանց պաշար եւ անձանաչ
Ճամբորդ շուրջը հողմի շառաչ
Ուղի պատած քարերով՝ սեպ
Չարտասանող անուն՝ Յովսէփ

31/12/86

լինելը, ձևերի ծածկագրված պատկերահիւս գորգը, բլուրների արտառոց ու անթեք ինքնաբաւութիւնը, որոնք յամառութեամբ կանգնած էին մարդկութեան առաջընթացի ճանապարհին:

Աշխատանքի գնալուց առաջ նա սեղանի լամպի տակ ուսումնասիրեց ատլասը՝ խոշորացոյցն անցկացնելով գետաբերանների, ովկիանոսների և հովիտների վրայով, Քարուլից մինչև Նիւ Եօրք, ճշգրիտ կենտրոնամետ շրջանագծով շարունակ տեղաշարժելով ծայրամասերից դէպի կենտրոն: Գրասենեակում հայտնաբերեց յառեց շողափայլ էկրանին՝ իր գահավէժ ու դատապարտած ապագային: Նա շղթայած էր իր Բլումբերգին: Եւ, այնուամենայնիւ, այդ Բլումբերգը, ինչպէս նա երբեմն անւանում էր իր սեղանին բազմած նորութիւնների որոնման համակարգը, աւելին էր, քան պարզապէս վատ լուրեր մշակող սարքը: Դա դրսի աշխարհի շտեմարան էր, թւային երթուղիների պահապան, մեծագոյն հարըստութեան և վերջինիս կործանմանը նպաստող:

Ֆինանսական աշխարհում նա յայտնի էր որպէս պարզապէս Ուեյն: Չհաստատուած լուրեր էին շրջում այն մասին, որ նրան տեսել են Օդէոնում, իսկ մէկը պնդում էր, որ տեսել է ձեռքով ուտելիս, նույնիսկ ափսէի վրայ միզելիս: Դրանց հաւատալ չարժէր, ասէկոսէներ էին, որոնք պէտք է հերքել, իսկ եթէ շուկան բաց է, դրա վաճառքից օգուտ ստանալ:

Տեղատարափ անձրևը թմբկահարում էր քաղաքի կենտրոնում գտնուող հեշային ֆոնդի 2 գրասենեակի պատուհանները: Ապա յանկարծակի անձրևը դադարեց, և արևի մի շող թափանցեց-անցաւ քուլայ-քուլայ ամպերի միջով: Ուեյնը դուրս նայեց: Շրջապատող բնապատկերը բաղկացած էր ապակու և պողպատի խտազանգւածից, ամպերի մէջ կորած ուղղաձիգ բանտաշէնքերից: Իր էլեկտրոնային համակարգին դէմ-յանդիման, նա զգում էր, ասես ռազմական ինքնաթիռի խցիկում լինէր, սոսկ շարժումից ու արագութիւնից կազմած մի արարած: Առտուրը կարծես ժամանակի և տարածութեան առքուվաճառք լինէր՝ նման գերձայնային օդանաւի օձագալար երթուղուն: Ոչ մի նշանակութիւն չուներ, թէ ո՞ւմ կողմից էր նա: Նա պատկանում էր այն հասարակութեանը, ուր գործարքները փոխարինում են մարդկային յարաբերութիւնները:

րին: Ապակու և պողպատի աշտարակներում չկային ո՛չ ընկերներ, ո՛չ բարեկամներ, կային միայն գործարքներ, որոնք հիմնականում կնքուում էին լռութեան մէջ կամ էլ օդորակիչի անկողմնակալ բզզոցի ներքոյ: Նա ուշադիր նայեց Բլումբերգին: Ամէն ինչ կրկին յըստակ դարձաւ: Երկու էկրաններին դեռևս ծանօթ գծապատկերներ էին: Դրա իւրաքանչիւր կէտը հիմնաւորած չափումների արտայայտութիւնն էր, իւրաքանչիւր կոտորակը՝ թաքնւած գանձի բանալի: Իւրաքանչիւր տասնորդական միաւոր արժանապատուութիւն էր աւելացնում անպատկառ հաճոյքին, մինչև որ 24 հազար բաժնեմասեր հատեցին գիծը: Յայտերն անգթօրէն աճում էին: Դրանից Ուեյնը ոչ ուրախանում էր, ոչ էլ առանձնապէս տխրում: Նա հպարտանում էր պատահականութեանն իշխելու մըտքից, սակայն, երբ բախտը երես էր թեքում նրանից, հազուադէպ էր բողոքում՝ ձևացնելով, որ իր վրայ չեն ազդում շուկայի շրջապատոյտները կամ էլ այն կեղտոտ խաղերը, որը կեանքն էր խաղում իր հետ:



էլ առանձնապէս տխրում: Նա հպարտանում էր պատահականութեանն իշխելու մըտքից, սակայն, երբ բախտը երես էր թեքում նրանից, հազուադէպ էր բողոքում՝ ձևացնելով, որ իր վրայ չեն ազդում շուկայի շրջապատոյտները կամ էլ այն կեղտոտ խաղերը, որը կեանքն էր խաղում իր հետ:

- Սա թշնամական յարձակում էր, – ասաց նրա բորսայական միջնորդը:
- Ինչպէ՞ս է դա ֆինանսաւորւում:
- Դեռ հաստատ չգիտենք, պարզապէս խփեց-անցաւ գիծը: Սպասի՛ր, հիմա կը գանգեմ մի քանի տղաների, ու նորից կը փորձենք:
- Պէտք չէ, մոռացիր դրա մասին: Արի պարզապէս ռա՛դ լինենք էստեղից:
- Օրացուցային երրորդ եռամսեակի վերջում նա իրեն յաղթող

զգաց: Շատ հեշային ֆոնդեր գումարներ էին կորցրել: Յերներն էլ անիծա՞ծ: Ինքը նախագուշացրել էր նրանց մօտեցող աղէտի մասին, բայց իրեն լսող չէղաւ: Իսկ հիմա պէտք է իրենց կեանքով վճարեն: Ո՞վ է մեղաւոր: Անցած շաբաթ նա զգուշացրեց ներդրումների կառավարչին Սաք Դոյից բաժնեմասեր գնելու վերաբերեալ: «Լսի՛ր, եղբայր, բոլորն էլ սիրում են համբուրգերը, – ի պատասխան խայթեց կառավարիչը: – Ես չգիտեմ դրա ճշգրիտ գինը, սակայն եթէ բարձրացաւ, Աստուած պահպանի Ամերիկան:

- Բայց էլ չի բարձրանայ,- ասաց Ուեյնը,- դրա տակը գոլ չկայ:
- Վստահիր ինձ, տե՞ս ոնց կը թռնի:

ՀԱՐԻԿԱՆՆԵՐԸ՝

- Թռնի, չէ՞ մի: Ախր թևեր չունի, ինչպե՞ս թռնի:
- Դէ ինչ-որ է, եղբայր:

Ուեյնն իր ուշադրությունը սևեռեց նեղն ընկած մէկ այլ արժեթղթերի շուկայի: Նա կորսիկական անտառափայտի ընկերության ծածկագիրը ներածեց Բլումբերգ: Բուստաչի եղբայրների ընկերությունն ամբողջ աշխարհում միակ թուղթ արտադրողն էր, որը գտնուում էր մի կողմ: Այն բորսայական միջնորդները, որոնք առքուվաճառքով էին զբաղում Բուստաչի արժեթղթերի շուկայում, չգիտեին, որ Կորսիկական կղզի է, կամ էլ որ դա Նապոլեոնի ծննդավայրն է, կամ էլ որ կորսիկացիները խօսում էին իրենց լեզուով, որը թերևս այնքան խորհրդավոր չէր, որքան հայերենը, սակայն բաւական դժար էր առանձնացնել որպէս այդպիսին: Նրանց հետաքրքրող միակ բանն այն էր, թէ արդե՞ք Բուստաչին յաջող տարի աւելի շատ անտառանիւթ կարտադրի նախորդ տարւայ համեմատութեամբ, կամ էլ կաւելացնի՞ արդե՞ք ծալքաւոր ստւարաթղթի արտադրութիւնը, կը բարձրանա՞յ արժեթղթերի գինը, թէ՞ կընկնի: Արժեթղթերի համընդհանուր շուկաներում ներդրողները գայլային անյագութեամբ էին տոգորած Բուստաչի արժեթղթերի նկատմամբ, և գնելու նրանց չնտածւած յանկարծահաս նոպաներին ինքնաբերաբար հետևում էին փսխման փուլերը:

Ոչ ոք չգիտէր այդ մոլի վարքագծի պատճառը: Արժեթղթերի շուկան ճիգեր էր գործադրում հետ մազլցելու շաբաթասկզբի մակարդակին, որին հետևեցին Լեման եղբայրները ներդրումային բանկի 4 կողմից դրական յանձնարարականներին:

- Ես խօսել եմ Լեմանների վերլուծաբանի հետ,- Ուեյնը բղաւում էր, սակայն ոչ ոքի դա առանձնապէս չէր վերաբերում: – Սա եղբայրներից այն մէկն է, որն իր քթից դէնը ոչինչ չի տեսնում:

- Մէկ դուլարով բարձրացաւ,- եկաւ նրա միջնորդի պատասխան IM5-ը:

- Ձև են անում, աւելի շատ վաճառիր:

- Եղպէս էլ կանեն, չէ՞:

Մի քանի րոպէ անց սկսեց Լեմանների արժեթղթերի անկումը, ինչպէս և կանխատեսել էր Ուեյնը:

- Ես գիտեի, որ ճիշտ եմ: Անիծեալն աւելի արագ է ցած իջնում, քան ուկրայինուհի պոռնիկը:

Այդպէս նա նստած էր իր Բլումբերգի առջև, սառած, հետևելով թևերի անկմանը, կարծես աշխարհը մօտենում էր դանդաղ, քաղաքակիրթ վախճանին: Եթէ պատմութիւնն ընդունենք որպէս ուղեցոյց, ապա ոչ ոք չգիտէր, թէ ի՞նչ կը պատահէր յետոյ: «Վաճառի՛ր, վաճառի՛ր, վաճառի՛ր,- բղաւեց Ուեյնը Բլումբերգի մէջ,- «Վաճառի՛ր, թէ չէ վերջներս կը գայ

Անգլերէնից թարգմանեց Լուսինէ Մխիթարեանը

Հարիկանը հսկայ պտտուող արեւադարձային (tropical) փոթորիկ է, որը կարող է պարունակել արագ քամիներ, որոնց արագութիւնը հասնում է մինչեւ մէկ ժամում 257 կիլոմետրի եւ մի օրում արծակել աւելի քան 9 թրիլիոն լիտր անձրեւ: Այս փոթորիկները հիւսիսային Հնդկական ովկիանոսում եւ Բենգալի թերակղզում կոչւում են «ցիկլոն», իսկ արեւմտեան խաղաղ ովկիանոսում՝ թայֆուն:

Ատլանտեան ովկիանոսի հարիկանների եղանակը սկսում է օգոստոսի կէսերից եւ շարունակւում է մինչեւ հոկտեմբեր: Միջին հաշուով տարեկան պատահում է 5-6 հարիկան:

Հարիկանները սկսում են որպէս արեւադարձային խանգարումներ ովկիանոսի տաք ջրե-



րում, որոնց մակերեսային ջերմութիւնը հասնում է 26.5 սելսիոս աստիճանի: Այս ցածր ճնշման համակարգերը սնւում են տաք ծովերից եկող էներգետիկայով: Եթէ մի փոթորիկի արագութիւնը հասնում է մէկ ժամում 60 կիլոմետրի, դա կոչւում է արեւադարձային դեպրեսիա: Երբ այդ depression-ի արագութիւնը գերազանցում է ժամում 63 կմ-ից, դա ճանաչւում է որպէս արեւադարձային փոթորիկ եւ ստանում է մի անուն: Երբ այդ արագութիւնը հասնում է ժամում 119 կիլոմետրի, դա դառնում է հարիկան:

Հարիկանները հսկայական ջերմութեան շարժիչներ են, որոնք էներգետիկա են արտադրում հսկայ մասշտաբով: Նրանք ջերմութիւն են ձեռք բերում ովկիանոսի խոնաւ օդից եւ ջրի գոլորշու թանձրացման (condensation) միջովով այն արծակւում են փոթորիկների մէջ:

Հարիկանը պտտում է ցածր ճնշման մի կենտրոնի շուրջ, որը կոչւում է նրա «աչք»-ը կամ «ակ»-ը:

ԱԻԵՐԱԾՈՒԹԵԱՆ ՇԱՐԺԻՉՆԵՐ



Վայր իջնող օդի պատճառով ստեղծվում է 32-ից 48 կիլոմետր լայնությամբ մի առերես հանդարտ տարածք: Սակայն ակը շրջապատված է մի կլոր «ակնապատով», որում բնակվում են փոթորիկի ամենահզոր քամիներն ու անձրեւները:

Այս փոթորիկները, երբ զարկում են ափին, ամենատարբեր տեսակի աւերածութիւն են առաջացնում: Ստեղծվում են հսկայ ալիքներ, որոնց բարձրութիւնը հասնում է 6 մետրի, իսկ լայնքը 161 կիլոմետրի: Հարիկանների զոհերի 90 տոկոսը այս հսկայ ալիքների հետեւանքով են տեղի ունենում:

Հարիկանի բարձր պատերը եւս աւերիչ են եւ հաւանական է առաջացնեն հզոր հողմապտոյտներ: Իսկ մեծ տեղատարաւիները ստեղծում են հեղեղներ եւ գետնի տեղաշարժ, որոնք կարող են հասնել քանի կիլոմետրերի:

Հարիկանների դէմ լաւագոյն պաշտպանութիւնը ժամանակին եւ ճշգրիտ կանխատեսումն է, որով բնակչութիւնը բաւականաչափ ժամանակ կունենայ դրա




ճանապարհից հեռանալու: ԱՄՆ-ի ազգային հարիկանի կենտրոնը վերահսկում է փոթորիկները, որոնք կարող են վտանգել քաղաքներն ու աւանները եւ 24 ժամ հաւանական փոթորիկից առաջ ազդարարականներ է հրատարակում:

ՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ ՖՈՒՏԲՈԼ Ե ԽԱՂՈՒՄ


Մեր ժամանակներում, ֆուտբոլը աշխարհի ամենասիրված մարզաձևն է. ոչ մի կասկած այդ մասին: Դրա պատճառը ինքը մարզաձևի գրաւչութիւնն է, նրա կանոնների պարզութիւնը, թէ՛ համաշխարհային լրատւամիջոցների կողմից դրա ժողովրդականացումը, դժւար է ասել: Բայց պատերազմից աւերւած Բելրուսի փողոցներից սկսած մինչեւ Աֆրիկեան Սոմալիայի դաշտերը մինչեւ Յնդկաստանի հոգեւոր մենաստանները, մարդիկ ֆուտբոլ են խաղում եւ խօսում են ֆուտբոլի մասին: Իսկ լուսանկարիչները առիթը չեն կորցնում մեր գլոբալացւած դարաշրջանում այս բոլորը արձանագրել իրենց կադրերում:





ԳՈՒՄՏԱԿ ԿՈՒՐԲԵԻ ՄԻ ՆԿԱՐԻ ՄԱՍԻՆ

Երևանի քոչար



Հայաստանի ազգային պատկերասրահի եւրոպական բաժնում ցուցադրում է ֆրանսացի նկարիչ Գուստաւ Կուրբէի «Երիտասարդ կնոջ դիմանկար» կտաւը: Թէ դա ինչպէս է յայտնուել Երեւանում, բացատրում է արւեստագէտ Երւանդ Քոչարը: Գրութիւնը արտատպում ենք «Ես եւ դուք» գրքից («Մուղնի» հրատարակչութիւն, Երեւան, 2007), որը պարունակում է Երւանդ Քոչարի գրութիւնները:



Նկարներն էլ ունեն իրենց կեանքը՝ կենսագրութիւնը. ծնում են, մեծանում, տեղից տեղ ձամբորդում, երբեմբ անհետ կորչում, երբեմն մի անսպասելի տեղից յայտնուում կամ ողբերգական վախճան են ունենում...

Հետաքրքիր ճակատագիր ունի Ֆրանսիական նշանաւոր նկարիչ Գուստաւ Կուրբէի մի կանացի դիմանկարը, որը այժմ գտնուում է Հայաստանում՝ Երեւանի պատկերասրահի եւրոպական արւեստի բաժնում:

1930թ. Փարիզում գնում էի Լուվրի թանգարան՝ մասնաւորապէս ուսումնասիրելու Անդրէա Մանտենիայի «Խաչելութիւնը»:



Գուստաւ Կուրբէ

Աւտոբուսից աչքիս ընկաւ մի նկար՝ մի դիմանկար, կանացի մի գլուխ, որի աչքերը ինձ գրաւեցին՝ չնայած նկարի մութ եւ անխնամ վիճակին: Անմիջապէս իջայ ավտոբուսից եւ մտայ խանութ: Պարզեց՝ խանութի տէրը մեռել էր, եւ աղջկաները վաճառում էին խանութում եղածը:

Ես ձեռքս վերցրի պորտրէն, որ ինձ կախարդական հայեացքով ցած էր բերել ավտոբուսից: Նկարը շատ էր սեւացած, ծածկւած էր անպէտք լաքի հաստ շերտով, նոյնիսկ ստորագրութիւնն աննշմար էր... բայց պորտրէի ճակատի ու քթի կառուցւածքից, աչքերի խոր եւ հմայիչ արտայայտութիւնից ակնյայտ էր մեծ վարպետի ձեռքը...

Ես գնեցի այդ գործը եւ Լուվրի փոխարէն շտապեցի տուն: Որքան կարող էի, մեծ զգուշութեամբ մաքրեցի նկարի վրայի կեղտը. աստիճանաբար երեսաց սքանչելի վարպետութեամբ արւած կանացի պորտրէն՝ ստորագրւած... «Կուրբէ»: Ուրախութեանս չափ չկար: Առանց ժամանակ կորցնելու՝ գնացի իմ մեծ բարեկամ՝ խոշորագոյն քննադատ Վալդեմար Ժորժի տուն: Յոյց տւի նկարը՝ զարմացաւ՝ հիացաւ: Անմիջապէս

ինձ ուղարկեց Շառլ Լեժէի մօտ, որը խոշոր հատորներ էր գրել Կուրբէի մասին: Լեժէն նոյնիսկ նամակ-յանձնարարականը ընթերցելուց յետոյ, դժկամութեամբ վերցրեց նկարը, որովհետեւ, ինչպէս ինքը վերջում բացատրեց, որ Լեժէն, նկարի վրայ թեթեւակի ակնարկ ձգելուց յետոյ, անմիջապէս գնեց նկարը հակառակ կողմից: Քիչ յետոյ նա յայտարարեց, որ նկարը Գուստաւ Կուրբէի գործն է: Նկատելով իմ զարմանքը՝ Լեժէն ասաց. «Կուրբէի նկարների կտաւներն առանձնայատուկ են. նկարչի մայրը եւ քոյրը հին սաւաններից էին պատրաստում դրանք»: Իմ նկարը ճիշտ այդպիսի կտաւի վրայ էր նկարւած: Յետոյ մի անգամ եւս ստուգեց ստորագրութիւնը՝ «նկարի գրունտը, ֆակտուրան եւ այլն: Երկու օրից տուեց գրաւոր մասնագիտական եզրայանգում՝ «Նկարը Գուստաւ Կուրբէի գործն է, որը, ամենայն հաւանականութեամբ, ներկայացնում է Ժորժ Սանդի ռոմաններից մէկի հերոսուհուն»:

«Գուստաւ Կուրբէի մի նկարի մասին»
«Գուստաւ Կուրբէի մի նկարը Հայաստանի պատկերասրահում» տպագրւել է Բէյրութ, 1409 1964թ, «Ազատամարտ»:

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ ԳԻՐՔ Է ԶՐԱՏԱՐԱԿԻԵԼ

Արման Տ.Ստեփանեան



Շախմատիստ Լևոն Արոնեանի մանկութիւնն ու շախմատում կատարած առաջին քայլերի մասին, նրա մայրը՝ Սեդա Արոնովան «Լևոն Արոնեան» գիրք է հեղինակել: Նոյեմբերի 23-ին «Գոլդէն Թուլիփ հիւրանոցում տեղի ունեցաւ գրքի շնորհանդէսը, որին ներկայ էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը:

Գրքի հեղինակը լրագրողների հետ զրոյցում պատմեց, որ ինքը այն նւիրել է Լևոնին՝ նրա ծննդեան 30-ամեակի կապակցութեամբ:

Ես անընդհատ փնտրում էի մի մնայուն նւիր: Բայց սրանից աւելի լաւ նւիր չգտայ: Քանի որ ես ունէի տղայիս մասին ամսագրերում ու թերթերում տեղ գտած պատառիկներ, որոշեցիք դրանք օգտագործել: Ես աւելի շատ գրել եմ նրա առաջին քայլերի մասին, իսկ Արոնեանի մասին, որպէս գրոսմայստեր, գիրքը ընթերցողների դատին կը յանձնեմ միւս տարի,- ասաց գրոսմայստերի մայրը:

Լևոն Արոնեանը նշեց, որ իր համար ամենատպաւորիչը գրքի սկիզբն է, որտեղ նկարագրուում է 1990-ական թւականներին իրենց ընտանիքի անցած ճանապարհի մասին:

«Սա գիրք է, որը պատմում է, թէ ինչպէս կարելի է անցնել դժարութիւնների միջով ու հասնել յաջողութիւնների: Այն նաև իմ կայացման մասին է և այն ջանքերի, որ մայրս է թափել ինձ համար,- յաւելեց Արոնեանը:

Այս գիրքը, որ ռուսերէն լեզուով է, լոյս կը տեսնի 3000 տպաքանակով:

Արոնեանը այսօր, ըստ միջազգային չափանիշերի,

համարում է Հայաստանի ամենալաւ շախմատիստը, նրա մասին բոլորն էլ խօսում են գովասանքներով:

Ռուսական «Մոսկովսկի Նովոստի թերթին տւած հարցազրոյցում ռուս անւանի գրոսմայստեր Սերգէյ Կարիակինը, պատասխանելով այն հարցին, թէ նա շախմատային աշխարհից ու՞մ կարող է համեմատել հանրայայտ ֆուտբոլիստներ Մեսսիի ու Ռոնալդուի հետ, ասել է հետևեալը.

«Թերևս, այժմ առանձնանում են նորւեզացի Մագնուս Կառլսէնն ու հայ Լևոն Արոնեանը: Ահա և Արոնեանը, աւելի շուտ, Մեսսին է, իսկ Կառլսէնը՝ Ռոնալդուն: Դուք հարցնում էք ոճի մասին, իսկ այստեղ հէնց այդ պատեհ դէպքն է, որպէսզի այդպիսի համեմատութիւն անել:

Յիշեցնենք, որ Մագնուս Կառլսէնը ՖիՖԵ-ի համաշխարհային վարկանշային աղիւսակի առաջատարն է, իսկ Լևոն Արոնեանը զբաղեցնում է երկրորդ տեղը:





ՄԱՅԱՑԵԼ Է ՅԵԿՏՈՐ ԿԱՄԱՉՕՆ

Պուերտո Ռիկոյի հիւանդանոցում 50 տարեկան հասակում մահացել է բռնցքամարտի նախկին չեմպիոն Հեկտոր Կամաչօն՝ «Մաչօ մականունով: Կամաչօն գտնուում էր կոմայի մէջ, այն բանից յետոյ, երբ իր տանը ստացել էր գլխի հրազէնային վնասւածք: Բժիշկները նրան պահում էին վերակենդանացման բաժանմունքում, սակայն նրանք և մարզիկի հարազատները որոշել են անջատել կեանքի արհեստական ապահովման սարքը, երբ նրա սիրտը դադարել է գործել: Կամաչօն պրոֆեսիոնալ շինգում անցկացրել է 30 տարի: Նրա մասնակցութեամբ մենամարտերը աչքի էին ընկնում իրենց դիտարժանութեամբ:

ԳՈՂԵՐԸ ԳՈՂԱՑԵԼ ԵՆ 3 ՄԵՂԱԼ

Գողերը կողոպտել են ֆրանսուհի 2012թ. Օլիմպիական խաղերի ծիւղոյի չեմպիոն, աշխարհի եռակի չեմպիոն Լիւսի Ղեկոսի բնակարանը: Գողացւած իրերի շարքում աշխարհի առաջնութիւնների ոսկեայ մեդալներն են : Բնակարանը Փարիզի մօտակայքի Թիէ քաղաքում է, և թալանւել է նոյեմբերի 23-25-ը: Անցած հանգստեան օրերին Ղեկոսը Մոնպելիէ քաղաքում էր, դիտելով Ֆրանսիայի ծիւղոյի առաջնութիւնը: Գողերը տուն են մտել պատշգամբի պատուհանից: «Նրանք երեք ոսկեայ մեդալ են գողացել, նոթքուք և ապարանջան, - նշել են ոստիկանութիւնում:

Տարօրինակ է, որ յանցագործները միայն երեք ոսկի են գողացել: Ի հարկէ, դա աշխարհի վերջը չէ, սակայն շատ տխրեցնող միջադէպ է: Այդ մրցանակների հետ շատ յիշողութիւններ էին կապւած, - ասել է Ղեկոսը «Էկիպե պարբերականին տւած հարցազրոյցում:

Մարզուհին փառք է տալիս Աստծուն, որ իր ոսկեայ օլիմպիական մեդալը իր մօտ է մնացել: Լիւսի Ղեկոսը ծնւել է 1981թ. օգոստոսի 6-ին ֆրանսիական Շոմոն քաղաքում: Լոնդոնի օլիմպիադայում, որը նրա սպորտային կարիերայում երրորդն է, նա «ոսկի մեդալի էր արժանացել, Պեկին-2008-ում՝ արծաթ: Ֆրանսուհին երեք անգամ աշխարհի չեմպիոն է դարձել 2005, 2010 և 2011 թականներին:



ՆՄԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ ԻՆՁ ԶԱՄԱՐ ՇԱՏ ԶԱՃԵԼԻ Է

Միլանի նախագահ Սիլւիօ Բեռլուսկոնին յայտարարել է, որ ուրախ է այն բանի համար, թէ ինչպէս է ձեռք բերւել «Իւվենտուսի նկատմամբ յաղթանակը (1:0): Կասկածելի 11 մետրանոց: «Իւվենտուսի նկատմամբ նման յաղթանակն ինձ համար էլ ասելի հաճելի է: Յիշեցնենք, որ այդ դիմակայութիւնում Միլանը յաղթեց 11ն. հարւածից խփւած գոլի շնորհիւ: Հանդիպումից յետոյ միլանյան ակումբի գլխաւոր մարզիչ Մասիմիլիանօ Ալեգրին նշեց, որ Իսլայի կողմից ձեռքով խաղ չի եղել և մրցավարն անիրաւացի է գտնւել 11 մետրանոց նշանակելով:



دوهفته‌نامه
اجتماعی فرهنگی

هویز

شماره ۱۳۶ / ۱۵ آذر ۱۳۹۱ / قیمت ۱۸۰۰ تومان

سال ششم



بزرگانان جلفای اصفهان تا مستعمرات
هند شرقی هلند (اندونزی)

دو هفته نامه
اجتماعی فرهنگی
هووس

شماره ۱۵، ۱۳۶، آذر ۱۳۹۱
سال ششم



